



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5571

ԹԻՒՆ ԳԱԻԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ՄՐՏԻ ԽԱՂԵՐ

ՍՈՒԳԻ ՀՈՂԱՀԱՐԸ

(ԶԻՆՍԱԿԱՆ ՎԷՊ)

ԺԻՏԻԴ ԿՕՅԻԷ

Թարգմ. Թ. ԹԷՐԶԵԱՆ

ՋԻԻՄՐԻԻԹԸ

Ժ. . 4. ՌՕՆԻ

Թարգմ. ՏՕՄԻՆՕ

معارف نظارت جلیله سنک ومطبوعات داخله مدیریت
بیه سنک ۱۴۸ نومرولی رخصتنامه سیله طبع اولمشدر



Տարգմ. ՍԱՐԸՆԱՆ ԵՒ ԸԳԼ.

Ալի ճուստկոի Թիւ 38

1902

84
9-74



20 JAN 2006

20 OCT 2000

ԱՐՏԻ ԽԱՂԵՐ

84
9-74
4y

ՍՈՒԳԻ ՀՈՎԱՀԱՐԲ

(ԶԻՆԱԿԱՆ ՎԷՊ)

ԺԻՏԻԴ ԿՕՅԻԷ

Թարգմ. Թ. ԹԻՐՉԵԱՆ

ՋԻԻՄԲԻԹԸ

Ճ. — Զ. ՌՕՆԻ

Թարգմ. ՏՕՄԻՆՈ

1002
5473



معارف نظارت جلیله سنک و مطبوعات داخلیه مدیریت
به سنک ۱۴۸ نوسرولی رخصتنامه سیله طبع اولنشد.



Կ. ՊԱՂԻՍ

Տարգմ. ՍԱՐԳՅԱՆ Կ. ՔԵԿ

Պարբ Ալի ճոստկի, Թիս 38

1902


استانبول
چاپخانه قزاقی
LIBRAIRES-ÉDITEURS
T. O. G. 2137, IRAN FRÈRES
Istanbul İCHAKMAKULLAR N. 24-26

20.03.2013

5571

409

ՍՐՏԻ ԽԱՂԵՐ



ՍՈՒԳԻ ԷՈՎԱԶԱՐԸ

ՉԻՆԱԿԱՆ ՎԷՊ



Չուան - Յէ իմաստասէրը իրիկուն մը տուն վերադարձաւ շատ մտայոյզ՝ սպիտակ հովահար մը ձեռքը :

* * *

Այս Չուան - Յէ սիրական աշակերտներէ մէկն եղած էր մեծն Լաօ - Յէի՝ զոր Երախայ - Մերունի կ'անուանէին՝ վասնզի սպիտակահեր ծնած էր, վարժապետը մեկնաբանած էր աշակերտին՝ Թաօ - Թէ - Քինկի հինգ հազար բառերու խորհրդաւոր իմաստը և ասկէ զատ իրմէ բան մը ծածկած չէր ընտիր վարդապետութեան խորհուրդներէն : Արդէն Չուան - Յէ հռչակաւոր էր . տիպար մ'էր առաքինութեան և հմտութեան . կարող եղած էր ամէն բանէ անջատել իր հոգին՝ ինչպէս վայելուչ է իմաստասէրի մը հոգիին :

Օր մը օրանց, սակայն, սէրն նկած էր անոր հասկցնելու թէ կարծածին չափ ալ անվիրաւորելի չէր : Դեռատի իշխանուհի մը զոր օր մը նշմարեց՝ մինչդեռ հովն անոր քօղին նեա կը խաղապատէր՝ բոլոր իր իմաստութիւնը տակնուվրայ ըրեր և վիլիստօփայութիւնը նեղը բերեր էր : Պահ մը մաքառելէ հտքը, վերջապէս անձնատուր եղաւ ու մատղաշ աղջիկն ամուսնութեան խնդրեց :

Յիոյ արքայական զարմէն սերած՝ նէ կը պանծար իր ազնուականութեամբ և դըժուարաւ խնամութիւն ընել կը յօժարէր : Բայց հոչակաւոր իմաստուն մը կրնայ ամէն բանի թեկնածու ըլլալ : Ասկէ զատ, իշխանուհին՝ որ Թիէն կը կոչուէր, այսինքն երկնաւոր՝ համակրած էր իմաստունին և անոր կինն եղած էր :

Չուան՝ Յէ անոր նեա առանձնացաւ՝ արքունիքէն հեռու, քաղաքներէն հեռու, դեզեցիկ լերան մը ստորտօր՝ Սօնկի թաղաւորութեան միտաւոր մէկ նահանգին մէջ՝ ուր ծնած էր՝ և հոն կը ջանար որ իմաստութիւն ու ամուսնութիւն՝ հաշտ կենակցին միատեղ :

* * *

Արդ, իրիկուն մը տուն դարձած էր՝ իր ամուսնանալէն ի վեր առաջին անգամ

ըլլալով տրտում տխուր՝ նեաը բերելով սպիտակ հովահար մը՝ զոր իր տնէն չէր տարած :

Իր կարմիր - սոկեծաղիկ ճենապակիէ սեղանին վրայ՝ մեղանը լուծուած էր լեւսաքարին մէջ : Մետաքոյէ թուղթը կիսով չափ կը պարզուէր, և վրձիններն իրենց սուր ծայրերը կը ցցէին՝ սև սաթէ քանդակազարդ եղջիւրէ մը դուրս :

Նստաւ՝ հոգիին խորէն հառաչելով, յետոյ վրձին մ'առնելով՝ թաթխեց զայն մեղանին մէջ և, իր ակամայ, սա չորս սողերը գծեց .

« Աւա՛ղ, գանկը կը ծածկէ խորհուրդները :

Ամէնեւն դիւքից մարմինը կրնայ կեղծ սիրտ մը պարունակել :

Մարդ, երբ ողջ է, ինքզինքը սիրուած կը կարծէ :

Հագիւ մեռնի՛ կը մոռցուի : — Կինդ ուրիշ սէր մը կ'երագի . . . : »

Հազիւ դէրը կը լմնցնէր, և անա մանրիկ ձեռք մը՝ կաթնորակ, որուն ծայրը ոսկի պատեաններով պահպանուած երկայն եղունգներով զինուած էր՝ շուտ մը յափշտակեց չորս սողով այդ գրութիւնը :

Չուան-Յէ ետին նայեցաւ . իշխանուհին հոն կեցեր էր :

Գեղեցիկ պարեգօտ մ'ունէր բաց-կանաչ վարդերով և թուշուններով նկարակերտ : Իր նազելի գլուխը կը ցնցէր զինգաւոր վայելուչ ասեղներու թուփ մը , և անոր շուրջի ողբ սքանչելապէս անուշ կը բուրէր :

— Սիրելի ամուսինս , ըսաւ նէ , ինչո՞ւ հառաչեցիր : Ինչո՞ւ այդպիսի սողեր կը գրես : Ի՞նչ է այդ ձեռքիդ սուգի հովահարին նշանակութիւնը :

— Այդ սրբան հարցմունք են , Երկնաւորդ՝ իմ :

— Պատասխանէ՛ ինձի :

— Գիտցի՛ր , ուրեմն , թէ ես հառաչեցի որովհետեւ այդ հովահարն ինձի կը ներշնչէր այն սողերը զոր կարդացիր առանց իմ թողտուութեանս :

— Ան ի՞նչ իմաստասէրի արժանի գեղեցիկ պատասխաններ են , ըսաւ բամբիշը նազանքով :

— Մի՛ սրդողիր . ինձի պատահած դէպքի մ'անթիւ գրեցի :

— Պատմէ՛ ինձի , լսել կ'ուզեմ :

Աշխոյժ և շնորհալի շարժումով մը՝ կատուի պէս՝ ամուսնոյն ծունկերուն վրայ ցատքեց նստաւ և մէկ թեւն անոր պարանոցին անցուց :

— Մտիկ կ'ընեմ , խօսէ՛ , ըսաւ :

— Այսօր երազացնոր կը շրջէի Գերեզմանատան ցանկին մօտ , և մտազբաղ կ'երթայի՝ ինչպէս միշտ՝ առանց գիտնալու թէ ո՛ւր : Յանկարծ գերեզմանոցը գտնուեցայ : Մտածումներս այն ատեն ուրիշ ուղղութիւն մ'առին . կը խորհէի թէ այս տեղ ամէնքն ալ իրարու հաւասար են , ամէնէն արմարներն ինչպէս ամէնէն իմաստունները , և թէ՛ ո՛չ մէկը ես կը դանայ հոնկէ : Մինչ յուշիկ յուշիկ կը թափառէի , թեթեւ աղմուկ մը ուշադրութիւնս հրաւիրեց : Աչուքներս վեր վերցընելով՝ տեսայ դեռահաս կին մը՝ այրինբուրու յատուկ , անկար , երկայն և սպիտակ պատմուճանն հագած : Նորակառօյց շիրմի մը քով նստած էր և շատ եռանդով կը հովահարէր դեռ խոնար կիրին ու հողին կազմած բարձրաւանդակը : Զարմանքով պահ մը զննեցի զինքը . կը յոգնէր , հովահարը մէկ ձեռքէն միւսը կ'անցընէր՝ առանց բնաւ դադարեցնելու իր նորանշան դբազանքը : Հետաքրքրութիւնս շարժելով՝ մօտեցայ իրեն և ըսի .

— Ներելի՞ է հարցնել ձեզի , թէ ո՞վ կայ այդ շիրմին մէջ և ինչո՞ւ դայն հովահարելու համար այդչափ կը յոգնիք : Արդեօք կը կարծէ՞ք թէ մեռելները շատ ասք կը զգան հողին ներքեւ :

— Այդպէս չէ, ըսաւ անիկա՝ սաստիկ շիկնելով. այրի մը կը տեսնէք իր ամուսինին գերեզմանին մօտ : Դեռ նոր զայն յափշտակեց ինձմէ մահը : Յորչափ կ'ապրէք, շատ սիրելի էր ինձի. այնչափ գորովով ինքն ալ կը գուրգուրար վրաս, որ հոգին փչելու ատեն երկիցս կը մեռնէր՝ յիշելով թէ զիս պիտի թողու : « Ո՛հ, սիրելի կինս, կ'ըսէր ինձի, եթէ երբեք մտքէդ անցընես երկրորդ անգամ ամուսնանալ, կը թախանձեմ որ սպասես գոնէ իմ գերեզմանս ծածկող սոնակոխ ու թաց հողը չորնայ՝ երկրորդ ամուսին մը չառած » : Հիմայ կը տեսնեմ թէ այս հողակոյտը չուտով չորնալիք չունի. անաատր համար այսպէս զբաղած եմ զայն հովանելու՝ որպէս զի խոնարութիւնը չուտ ցնդի :

Այս միամիտ խոստովանութիւնը լսելով՝ դժուարաւ կոցայ քրքիջս զսպել. սակայն բռնեցի ինքզինքս, և նոր հարսնիքի մը այնչափ կարօտցած այս այրիին առաջարկեցի որ իրեն աջակցիմ : Մտադիւր յանձն առաւ՝ և չորհալից ողջոյնով մը՝ հովանարն ինձ կարկառեց : Քիչ ատենէն խոնարութիւնը փարատեցաւ, հողը գորչագոյն և չոր եղաւ. մատաղ այրին ազատ էր նոր սէրերու թռչելու : Երախտագի-

տութեամբ շնորհակալ եղաւ ինձի, մինչև իսկ իր գլխազարդէն գոհար մը նուիրեց ինձի. բայց հովանարը միայն ընդունեցայ զոր պիտի պահեմ ի յիշատակ այս դէպքին : Նախ խնդացի. բայց իսկոյն հասկցայ թէ այդ տեսած տեսարանը ո՛րչափ անգութ էր ամուսինի մը համար և թէ ո՛րչափ խորհրդածելու արժանի բան է :

* * *

— Բայց այդ կինն իր սեռին նախատինքն է, ազադակեց Երկնաւոր՝ սրտմըտութենէն կարմրելով. ինչպէս կը համարձակիս զինք ուրիշներու հետ համեմատել : Իրաւ, գեղեցիկ աշխատութիւն մ'էր՝ իմաստասերի մը համար՝ շիրիմ մը հովանել, և աղէ մը նուազ զգօնութիւն կը ցուցընես այդ յիմարութեան մէկ յիշատակը պահել ուղեւորդ :

Այս ըսելով հովանարն յափշտակեց եւ կտոր կտոր ըրաւ :

— Աղէկ չէ ըրածդ. կրնար քեզի ծառայել իմ գերեզմանս չորցընելու, ըսաւ Չուան-Յէ թախծադէմ :

Բայց աս ըսածին զզջաց. Երկնաւոր՝ որ պահ մ'առաջ կարմիր էր՝ դալկացաւ, սսկեմագիլ երկայն թաթիկներովն օդը

բարախեց եւ մեռելատիպ թաւալեցաւ
գորգին վրայ :

Չուան-Յէ իր գրկին մէջ առաւ զայն ,
ամէնէն փաղաքշական անուններով զինքը
կանչեց , և որովհետեւ չէր պատասխաներ ,
վիթի եղջիւր այրել տուաւ . յետոյ թա-
փանցիկ իւղ թափեց բաժակի մը մէջ ,
պտեղ մը փոշիացած մուշկ ցանեց վրան
և ջանաց այս խառնուրդը խմցնել իր ան-
կենդան կնոջ :

Վերջապէս սթափեցաւ , և այն ատեն
հեղեղի պէս հոսեցան արցունքները և
և բուն կշտամբանքով ամուսնին դէմ՝
կ'երգնուր անոր՝ մինչև իր մահը անսա-
սանելի հաւատարմութիւն :

— Լաւ , լաւ , ըսաւ իմաստասէրը՝ վէճը
փակելու համար . յանցաւոր եմ . դուն
կիներուն տիպարն ես , ա՛լ ատոր վրայով
չխօսինք :

Եւ իրաւ ալ , ատոր վրայ խօսք չեղաւ :
Նորէն զուարթացաւ Երկնաւոր , և Չուան-
Յէ նորէն իր ուսումներուն պարապեցաւ :
Բայց թէեւ երջանիկ կ'երեւար՝ թէեւ
զուարթադէմ էր՝ ներսէն կը տառապէր ,
որդը պտուղին մէջ էր , կասկածը կը կըր-
ծէր իր երջանկութիւնը : Կ'ուզէր միան-
գամայն ողջ ու մեռած ըլլալ՝ զիսնալու
համար թէ ի՛նչ կ'արժէր իր կնոջ սէրը :

Օրը հարիւր անգամ ինք իր անձին կը
հարցընէր՝ « Պիտի լա՛յ վրաս . իր սուգին
վերջանալուն պիտի սպասե՞ նոր ամուսին
մը առնելու համար : »

Այս յարատե վարանումներն իր առող-
ջութիւնը խանգարեցին և քիչ ատենէն
չարաչար այլայլեցին : Օր մը երկայն չըր-
ջադայութենէ մը վերադառնալուն , ըսաւ
թէ չատ տկարացեր է և անկողին մտաւ :

Արագ արագ ծանրացաւ հիւանդու-
թիւնը , և քիչ ատենէն բժիշկները յայ-
տարարեցին թէ իմաստասէրը դատապար-
տուած էր մահուան : Երկնաւոր քովէն չէր
զատուիր և առատ արցունք կը թափէր :

— Ուրեմն զատուի՛լ հարկ պիտի ըլլայ
մեզի , կ'ըսէր Չուէն-Յէ : Երդում ըրէ
գէթ , անջատման կսկիծն ամօքելու հա-
մար , թէ՛ սիրող ուրիշի մը պիտի չտաս՝
մինչև որ չիրմիս հողակոյսը չորնայ :

— Կ'երգնում քեզ , եթէ երբեք հնար
ըլլայ ինձի քեզմէ վերջ ապրիլ , չամուս-
նանա՛լ երբեք , աղաղակեց Երկնաւոր
հեղձամղձուկ ձայնով :

Եւ որովհետեւ վերահաս էր գերագոյն
վայրկեանը՝ հիւանդն իր մահճէն վերցու-
ցին և տան հարաւային արեւմտեան կող-
մը տարին՝ սրբանուէր սենեակին մէջ՝ որ
հոն կարենայ մեռնիլ իրենց ազգային ա-
ւանդութեան համեմատ :

Ձինք գեանի վրայ պառկեցուցին՝ խնամով հեռացնելով իրմէ զէնքերն ու հուռազարանները, և ամէն կողմ սրսկումներ քրին :

Եւ անա բժիշկը ծանուց թէ մեծանուն Իմաստասէրին կենսական ոգիները իր մարմինը թողած էին :

Այն ատեն ջղային ցնցումներ բռնեցին Երկնաւորը. թեւերը կը պրկէր, մասները կարկամեցան, և ճապուկ հասակը դէպ ի հոեւ կքեց՝ կոտորուելու մօտ, ետքը սրահէն դուրս վազեց աղիոզորմ՝ կողկողելով : Առաջին յարկն էլաւ, յետոյ երկրորդը, յետոյ՝ առանց կասելու՝ հասաւ վերնայարկը. հոն՝ իր քով հասան և իրեն յիշեցուցին թէ այս արարողութիւնն ինք չէր որ պիտի կատարէր :

— Իմինէս զատ ո՛չ մէկ ուրիշ ձայն ետ պիտի կանչէ ամուսնիս կենսական ոգիներն, ըսաւ անիկա, ետ մղելով սպասաւորները որ զինք կեցնել կը ջանային :

Մէկ ոստումով մը պատուհանէն քիւիս վրայ անցաւ՝ և յետոյ ծունկերովը, ձեռքերովն ու եղունգներովը սկսաւ մագլցել տանիքն ի վեր՝ ամէն վայրկեան վտանգի մէջ ըլլալով ապիկուած կղմիւնտրներուն վրայէն գայթելու՝ և գաւիթին սալաքարերուն վրայ ջախջախուելու : Ձղոտ յոտ

մը զինք կը սրտապնդէր : Մինչև գագաթն հասաւ և փաթթուելով դրօշակիր փայտին՝ որ պրշակին ծայրերէն մէկը կը զարգարէր՝ կրցաւ վրան ելլել : Հոն էր իրաւ ալ տանը ամէնէն բարձր և ամէնէն վտանգաւոր տեղն ուր պէտք է հասնիլ՝ ինչպէս պատուիրուած է՝ թուած հոգին ետ կանչելու համար : Երկնաւոր դարձաւ դէպի Հիւսիս, և՝

— Չուսն-Յէ, վերադարձի՛ր . վերադարձի՛ր . վերադարձի՛ր, գոչեց :

Եւ իւրաքանչիւր աղաղակին՝ ձայնը կ'ուռեցնէր : Անտարակոյս վերջին անգամուն քանի մը մղոն հեռուէն զինք լսեցին : Բայց Իմաստասէրին կենսական ոգիներն անկէ հեռու գացած ըլլալու էին, որովհետեւ չէին լսեր :

Իշխանուհին տանիքին վրայ նստաւ և սահելով մինչև վերնայարկը մտաւ : Այն ատեն ահուրի ճիչեր արձակելով՝ շուտափոյթ իջաւ յարկերն ի վար և բակը գնաց : Հոն՝ թէպէտ ընդհանրապէս այս արարողութիւնը խափանուած է՝ սկսաւ ասդիտ անդին ցատքոտել՝ ցուցնելու համար թէ ցաւէն խելագարեր էր : Յետոյ վերադարձաւ հանգուցեալ ամուսնին քով՝ զոր դարձեալ անկողնին մէջ պառկեցուցած էին, և ինք անձամբ՝ հեծեծագին՝ անոր

մահու յետին պաշտօնները կատարեց :
 Երբ հարկ եղաւ զայն դնել՝ նոր, գե-
 ղեցիկ ու քանդակուած դազաղի մէջ, զոր
 երկար ժամանակէ ի վեր կը ճանչնար,
 ինչպէս օրէնք էր՝ խելքը կորսնցուց :

Երկնաւոր քովն ազգական չունէր. այն
 առանձնութեան մէջ, ուր քաշուեր էր փի-
 լիսոփան, քիչ բարեկամութիւններ այցելու-
 թեան կուգային եւ դրացի ալ չունէր .
 հոն էր անիկա՝ լուիկ մնջիկ՝ իր ցաւին հետ
 միայնակ ու տխուր :

Իրիկունը՝ մահազոյժ հրաւիրագրերն
 յղելէ ետքը՝ մեծ սուգի հանդերձներն հա-
 գաւ՝ հում կանեփէ, անկար եւ անխճիպ :
 Գաւթին մէջ չոր խոտէ մահիճ մը փռել
 տուաւ, և իրեն բարձ առաւ աղիւս մը,
 և կը պատրաստուէր անսուազ պառկելու՝
 երբ տանը դրօսի կողմէն աղմուկ մը լըս-
 ուեցաւ . յետոյ դրնդիւն՝ և արտաքին
 դրան կրկնակի հարուածներ :

Գեռատի այրին սարսափած՝ ծառայ մը
 զրկեց իմանալու համար թէ ի՞նչ կար :

Քանի մը վայրկեանէն, ծառան վերա-
 դարձաւ՝ ուղեկցելով գեղեցիկ պատանիի
 մը : Սա ա՛յնչափ անակնկալ կերպով
 մտաւ ներս որ երկնաւոր ժամանակ չունե-

ցաւ փախչտելու կամ թեզանիքով դէմքը
 սքօղելու : Ամօթխած պղտիկ ճիչ մը ար-
 ձրկեց՝ և ետ ետ նահանջեց մինչև սան-
 դուխը : Բայց նորեկը կարծես չէր տեսներ
 անոր տագնապը .

— Հնա՞ր է որ իմ սիրեցեալ վարդա-
 պետս թողած ըլլայ աշխարհ, աղաղակեց
 նորեկը՝ խոր յուսահատութեան շեշտով :
 Ի՞նչ, ինձի կը գրէ որ գամ զինք իր ա-
 ռանձնութեան մէջ տեսնեմ . իր հրաւի-
 բագիրն առածիս պէս ճամբայ կ'ելլեմ,
 և ի՞նչ կը գտնեմ հոս հասնելուս : Եղո՞ւկ,
 եղո՞ւկ, որչափ թշուառ եմ :

Եւ լալագին կը խնդրէր որ տանին զինք
 հանգուցեալին քով՝ յետին մեծարանքն
 անոր մատուցանելու համար :

Նոյն միջոցին երկնաւոր հարցափորձեց
 ծառան, որ Իմաստասէրին երիտասարդ ա-
 շակերտին հետ եկած էր, և անկէ տեղե-
 կացաւ թէ անիկա աղտուական ուսանող
 մ'էր, Լի-թիու անուն և շատ մը քննու-
 թիւններ անցուցած էր մեծ փայլով : Ի-
 մացաւ նաև թէ հեռաւոր գաւառէ մը
 կուգար, թէ ճամբաները միահարթ և ան-
 քոյթ չէին, թէ գիշերէն առաջ հասնելու
 համար ոչ մէկ պանդոկ կանգ առած էր և
 մինչև իսկ առաւօտէն ի վեր անսուազ էր :

Աս լսելով գեռատի կինը լուեցուց իր

կակիծն և չտապաւ ընթրիք մը հրամայեց:

Լի-թիու՝ երբ վար իջաւ՝ զայն զբաղեալ գտաւ կարգադրելու յախճապակիէ սկահակները՝ ճաշի սեղանին վարդադոյն մարմարին վրայ:

— Ազնուատոհմ մանկուհի, ըսաւ անոր՝ խոնարհելով՝ արդեօք կարելի չէ՞ ինծի տեսնել իմ հոչակաւոր վարդապետիս այրին՝ իմ փխուր պարտականութիւններս կատարելու և հրաժեշտ առնելու համար իրմէ:

— Ինչո՞ւ « մանկուհի » կը կոչես զիս, ըսաւ Երկնաւոր. քու առջեւդ է, տէր, Չուան-Յէի թշուառ ամուսինը:

— Չեզ իր աղջիկը կարծեցի, ներեցէ՛ք, աղաղակեց ուսանողը՝ զարմացական ուտումով մը՝ և յարեց իբր մեկուսի. Չէի գիտեր թէ Իմաստասէրը՝ իր ձմրան մօտ՝ ծաղկափթիթ դարունն իրեն ընկեր առած էր:

Այս դիտողութիւնը անպատշաճ թուեցաւ իշխանուհիին. բայց միանգամայն չկրցաւ ինքզինք զսպել հաճոյք մը զգալէ, և արագ արագ ըսաւ՝ իր տազնապը ծածկելու համար:

— Հրաժեշտ առնելու խօսք կ'ընէք. այդ անհնար է: Ամուսինիս հոգին հանգիստ չպիտի ընէ՛ եթէ ըստ օրինի չլրա-

ցընեմ ասօնջականութեան պարտքս իր սիրելագոյն աշակերտներէն մէկուն նկատմամբ: Հաճեցէք նստիլ այս սեղանը որ ձեզի համար պատրաստուած է, և մի՛ կարծէք թէ վաղուրնէ առաջ պիտի մեկնիք:

— Յիմարութիւն կ'ըլլայ մերժել, ըսաւ Լի-թիու, պահ մը վարանելէ ետքը, քանզի մեր ձիերը անկարող են մղօն մը անգամ քալելու. բայց այնչափ անգութ չեմ որ անօթութիւնս յագեցնելու ելլեմ մինչդուք հարկադրուած էք ծոմ բռնելու: Սեղանին չպիտի մօտենամ, եթէ դուք ալ ինծի չմասնակցիք:

— Ո՛հ, Տէ՛ր, ատիկա բոլորովին հակառակ պիտի ըլլար սովորութեան:

— Լա՛ւ, ես ալ ձեզի հետ ծոմ կը պահեմ:

Եզան խորտիկները բերուեցան, և Երկնաւոր՝ որ կը մեռնէր անօթութենէ՝ անոնց հոտէն կը մարմրէր: Չկրցաւ դիմանալ:

— Չեր ախորժակին չ'ընասելու համար, ըսաւ բամբիշը, քիչ մը բրինձ ուտեմ: — Բայց որովհետեւ երիտասարդը բամբիշին ամէն պատառին կը հետեւէր, հարկ եղաւ որ Երկնաւոր ամէն կերակուրներէն ուտէ, և կշտապինդ կերաւ:

Գիշերը՝ չոր խոտէ մահճին վրայ ուր պառկեր էր առանց գօտին քակելու, ի-

5453

րեն բարձի տեղ ծառայող աղիւսը վիզը
ցաւցնելուն՝ վայրկեան մը չկրցաւ աչքը
գոցել, և փոխանակ հանգուցեալ ամուս-
նին, որուն անունը կը կրկնէր՝ լալ ջանա-
լով, իր մտքին առջեւ կը նկարուէր գե-
ղեցիկ պատանիին պատկերը՝ շնորհալից
հասակով, երկաթն սե աչքերով և հասուն
դեղձի պէս կարմրորակ բերնով :

Երբ առաւօտուն արթնցաւ, ոսկրաբեկ,
հառաչեց՝ խորհելով թէ երիտասարդ օտա-
րականը պիտի մեկնէր : Բայց մեռելին
քով ողբալու, բաժակ մը նուիրելու եւ
պատարագներ մատուցանելու ժամն էր .
և իշխանուհին այդ պարտքերը կատարեց :

Իր արդուզարդին՝ վալլածէն աւելի ժա-
մանակ անցուց . և չարաչար ամհնալով
երկար եղունգները տանիքին կղմինտրե-
րուն մէջ թողած ըլլալուն՝ մատներուն
ծայրն անցուց ոսկի պատեաններ, իբրեւ
թէ տակաւին պահպանելու բան մը գըտ-
նուէր :

Նորէն վար իջնելու ատեն, Լի-թիուին
ծառան տեսաւ՝ որ տխրադէմ կ'ելլէր իր
տիրոջ սենեակէն :

— Ազնուատոհմ այրի, ըսաւ ծառան,
անա անախորժ պարագայ մը որ չատ
պիտի տխրեցնէ ձեզ . երիտասարդ սե-
պուհն՝ իմ տէրս՝ սոսկալի նոպաներու

ենթակայ է՝ չարաչար աշխատելէն վրան
եկած հիւանդութեան մը պատճառաւ : Ե-
րէկուան անակնկալ գոյժը սիրտը խռովեց,
և մինչդեռ ճամբայ ելլելու կը պատրաս-
տուէր, այդ գարշելի տենդը նորէն վրան
եկաւ :

— Շուտ բժիշկը կանչենք, պոռաց Երկ-
նաւոր :

— Անօգուտ է, իշխանուհի, պատաս-
խանեց ծառան . ես միայն գիտեմ զինքը
խնամել, և խոհանոց պիտի երթամ պէտք
եղածը պատրաստելու համար, եթէ կը
հաճիք բացակայութեանս միջոցին հիւան-
դին քով կենալ :

— Գնա՛, ես քովը կը հսկեմ, ըսաւ
մատաղատի կինը :

Եւ որչափ ալ ուղեց սեմին վրայ կե-
նալ, չկրցաւ դիմադրել այն փափագին որ
զինք կը մղէր սենեակին մէջ մտնելու :

* * *

Պատուհանին վարագոյրները արեւին
լոյսը կը մեղմացնէին, և կանաչ կիսա-
ըստուեր մը կը յօրինէին : Լի-թիու հագ-
ուած պառկեր էր անկողնին վրայ :

Տեսնելով Երկնաւորը՝ ճիգ մ'ըրաւ որ
ուք ելլէ ու բարեւէ, բայց կինը փութով
առաջ անցաւ արգելելու համար :

— Զգո՛ւշ կեցիր, ըսաւ, չըլլայ թէ ան-
խոհեմութիւն մ'ընես . կը ցաւիմ զքեզ
հիւանդ տեսնելուս, և ուխտեր կ'ընեմ
քու բժշկութեանդ համար: Շա՛տ ան-
հանգիստ ես:

— Անուշ ձայնդ սպեղանի մ'է, ըսաւ
մեղմ ձայնով: Յաւը գլխուս մէջ է, սոս-
կալի՛ր ցաւ . բորբոքում մը: Ձեռքդ՝ որ
ձիւնին ձերմկութիւնն ունի՝ անոր զովու-
թիւնն ալ ունենալու է. ինծի կը թուի որ
եթէ ճակտիս վրայ դնէիր՝ ա՛լ ցաւ չէի
զգար:

— Այդ չ'ըլլար, ըսաւ Երկնաւոր՝ շիկ-
նելով:

Բայց երիտասարդը արդէն աղջկան ձեռ-
քը բռնած էր և իրեն ձեռքին մէջ կ'ամ-
փոփէր: Այդ բանը կնոջ բոլորովին ան-
վայել երեւցաւ . բայց միանգամայն կը
խորհէր .

— Ի՛նչ ալ աղէկ խելք ըրի՝ եղբնգնոց-
ներս դնելուս:

— Ուրեմն դուն զիս բուժել չե՞ս ուզեր,
ըսաւ Լի-Թիու աղաչաւոր ձայնով:

Ա՛լ չզիմացաւ Երկնաւոր և ինքնայօժաբ
դրաւ ձեռքը պատանիին երկայն սև յօն-
քերուն վրայ՝ որ կարծես սնդուսէ յօրին-
ուած էին:

— Ա՛հ, ի՛նչ բարի ես, աղաղակեց Լի-

Թիու, և որչափ կ'ամոքին ցաւերս: Նե-
քէ՛ որ քեզի ըսեմ թէ այս չար տեսդը
քու պատճառաւդ եկաւ ինծի: Սարսափե-
ցայ, սոսկալի՛ր իմանալով թէ Չուան-Յէի
կինն էիր . չկրցայ հանդուրժել մտածելու
թէ անոր վաթսուն ձմեռները քու տասն-
եւ ութ դարուններդ սառեցուցին, և թէ
խղունջը տէր էր փեննա ծաղիկին:

Մատաղ այրիին այնպէս թուեցաւ որ
աշակերտը շատ քիչ պատկառանքով կը
խօսէր իր վարպետին վրայ . բայց ներսի-
դիէն ձայն մը իրեն կ'ըսէր թէ վերջապէս
իրաւունք ալ ունէր ըսածին:

Յանկարծ երիտասարդը ետ մղեց զայն՝
և ոտք ելաւ յօնքը պոստելով, աչուրնե-
րէն նորանչան կայծեր արձակելով:

— Ո՛չ, ո՛չ, թո՛ղ զիս, ըսաւ, ի՛նչ
չահ ապաքինելէ: Ասկէ դուրս ա՛լ ինծի
հանգիստ չկայ: Յաւիտենական կսկիծ մը
հետս պիտի տանիմ: Ա՛հ, ինչո՞ւ եկայ
հոս: Ես որ այնչափ անփոյթ էի կիներու
մասին և ուսումը անոնցմէ նախամեծար
կը համարէի, հնա՛ր է որ այս նորատի
այրիին մէկ տեսքը միտքս ու սիրտս մի-
անգամայն յափշտակեն, այնպէս որ խեն-
թենալս կուգայ՝ խորհելով թէ ուրիշ մարդ
մը զինք ինձմէ առաջ տեսած է, իբրև
թէ իմ ստացուածքս ինձմէ խորած ըլլար:

Նոյն վայրկենին սպասաւորը ներս մտաւ դեղերով, և Նրկնաւոր փախաւ իր լսածներէն յուզուելով:

Ամուսնին դազաղին պատահեցաւ զոր դէպի տաղաւար մը կը տանէին, բակին մէկ անկիւնը, և վայրկեան մը չհասկցաւ թէ ի՞նչ էր եղածը: Յանկարծ յիշատակը մտքին մէջ արթննալով, սկսաւ հեծեծել և ուզեկիցներուն հետեւեցաւ: Նուէրներ մատուցին՝ բրինձ, միս և զինի. և ետքը թողուցին մեռելն այն տաղաւարին մէջ ուր ամիս մը պիտի սպասէր իր յուզարկաւորութեան:

Իրիկունը Լի-թիու, կարծես քիչ մը ապաքինած էր, և ներում խնդրեց Նրկնաւորէն իր տուած ձանձրութեանց համար, ետքը յարեց առանց համարձակելու անոր երեսը նայիլ:

— Մոռցի՛ր տենդին ցնորքներու մէջ ըրած բանդազուշանքս. կ'ամչնամ և կը ցաւիմ:

— Ի՛նչ, աղաղակեց իշխանուհին՝ որուն աչքերը յանկարծ ողողեցան արցունքով, այդ ամենը պատրանք մ'էր:

Ուսանողը բոցակէզ նայուածք մը արձակեց՝ որ, կարծես, ծծեց այն ցօղը զոր սիրոյ արշալոյս մը կը հոսեցնէր անոր չքնաղազեղ այտերուն վրայ:

— Տենդն ինձմէ յափշտակեց գաղտնիք մը զոր լուել պէտք էի՝ թէ և մեռնիլ հարկ ըլլար ինծի: Հնա՞ր է որ արձագանգ մը գտած ըլլայ քու սրտիդ մէջ:

— Անխոհեմ արցունքս մատնեցին զիս և ամօթահար եմ, մոմնջեց դեռատի կինը: Այլ բան մի հարցնէր . . . :

* * *

Իր լապտերի նման բոլորածե պամպուէ մեծ անկողնին վրայ՝ այն գիշերը դիւթիչ երազներ ունեցաւ իր սենեակին մէջ, զոր իբր սուգի նշան մերկացուցեր էին օթոցներէն ու գորգերէն:

Առաւօտուն արթնցաւ բերկրապատար աշխուժով, և խոստովանեցաւ ինքնիրեն թէ երբեք այնչափ երջանիկ եղած չէր:

Բայց այս երանութեան՝ ծայրայիղ անձուկ մը յաջորդեց երբ իրեն իմացուցին թէ երիտասարդ օտարականը նոր նոպայ մ'ունեցեր էր, և թէ կեանքը վտանգի մէջ էր:

Դալկադէմ՝ շնչասպառ դիմեց անոր սենեակը: Մառան անկողնին քով ծնրադիր կ'արտասուէր, մինչ Լի-թիու՝ գունատ, անշարժ, աչքը գոց՝ մեռած կը թուէր:

« Ա՛հ, իմ ազնիւ տէրս, կը հեծէր ծա-

աան , ա՛լ քեզի համար բան չեմ կրնար ընել : Ժամ մը չանցած՝ մեզ յաւիտեան պիտի թողուս : »

— Եթէ դեռ կ'սուրբի , ինչո՞ւ հող ապուշի պէս կեցեր՝ կը հեծեծես , փոխանակ ջանալու որ փրկես զայն , պուռաց երկնաւոր այլայլած :

Եւ յարեց՝ ուժղին ցնցելով սպասաւորը .

— Չե՛մ ուզեր որ մեռնի , կը հասկնամս . չե՛մ ուզեր ,

— Մեծանո՛ւն իշխանու՛նի , պատասխանեց ծառան , դեղ մը միայն կայ՝ զինք վերակենդանացնելու կարող . այդ դեղը ճարել անհնար է :

— Ի՛նչ դեղ է , շո՛ւտ ըսէ : Երբեմն անհնարը հնարաւոր կ'ըլլայ :

— Ա՛հ , ազնուական այրի , ինչո՞ւ վայրապար բաղդին դէմ մրցիլ , ըսաւ ծառան հառաչելով . երիտասարդ տէրս բուժելու համար պէտք է անոր ճակտին վրայ քանի մը անգամ դնել նոր մեռած մարդու մը ուղեղը :

— Ամէնն ա՛յդ է , աղաղակեց երկնաւոր :

Առանց վայրկեան մը կորսնցնելու , փայտի շտեմարանը վազեց և փայտ կոտրելու կացինն առնելով՝ առանց տատամսելու՝ վազեց դէպի այն տաղաւարն ուր Չուէն-Յէ կը հանդէշէր :

Առանց մեծ դժուարութեան քակեց դադաղին կափարիչը՝ որ դեռ գամուած չէր : Մէկդի քաշեց մետաքսէ պատանքներն և մեռելին գանկին վրայ տապարը բարձրացուց . . . :

Բայց այն ատեն արհաւիրքի զարնուրելի ճիչ մը որկորին մէջ խեղդուեցաւ : Ահագնադողորդ քրքիջով մը վեր տնկուեցաւ մեռելն ու անոր թեւէն բռնեց .

— Հա՛ հա՛ . . . ա՛յդ է ուրեմն անմխիթար այրին որ չէր կարծեր իմ մահուանէս վերջն սուրբիլ , մահչեց սոսկալի ձայնով : Ահա՛ հոս կեցեր է , տապարը ձեռքը՝ գանկս ձեղքելու և իր տարփածուն սպեղանի շինելու համար : Հա՛ հա՛ . թշուառական տխմար , ի՛նչպէս աղէկ ինկար որոգայթիս մէջ : Ո՛չ , ընաւ մեռած չեմ , և ես ինքս այդ ամէնը երեւակայեցի որ տեսնեմ քիչ մը թէ ի՛նչ է կնոջ մը արժէքը : Հա՛ , աչքը խածաւ աղուոր աշակերտս , ան աղէկ խաղաց իր դերը :

Երկնաւոր՝ յուսահատական ճիգով մը՝ յաջողեցաւ ճողոպրել և փախաւ՝ քունքը ձեռքերովը սեղմելով , ամօթէ ու ցաւէ լլկուած , ու միայն կը մրմուար .

— Լի-թիւ , եղո՛ւկ , եղո՛ւկ , մատնի՛չ ու դահի՛ճ . . . :

Յետոյ՝ գօտին քակելով՝ գնաց ինքզինք կախեց պարտեզին սալորենիէն :

Չուան-Յէ զայն կը հալածէր իր քրտմնելի քրքիջով, և երբ՝ ծամածուռ ծառին վրայ անոր դիակին ծածանիլը տեսաւ՝ սղբալի կերպով երկնցած իր սուգի սպիտակ պատմութեանին մէջ, տուն մտաւ իր պատանքները քաշկուտելով և տապարը ձօձելով ձեռքին մէջ : Հարսնիքի առագաստը մտաւ և հոն՝ խելագարած՝ սկսաւ զարնել ամէն անօթներուն՝ պարելով և երգելով սա ափյափոյ երգը :

« Իմաստաւորի մը ուղեղով սպեղանի մը՝ այս եր անա հարսներու սիպար կնոջ մը հնաւու մասներուն պատաստելիք :

« Իրաւունք ունեւ սուգի հովանարը ջախջ սխելուն . իրեն աս չեւ բաւեւ . իրեն սապար մը պէտք էր գանկս նեղեխու համար :

« Հա՛, հա՛ . . բոլոր կիները ս սլորեցին երեւ կախուելու էին , այս կերպով մարդիկ խաղաղութիւնը կը գտնէին .

« Եւ ամենքն ինծի նման կրնային խնդալ ամանները ջախջախելով : »

Պատուհանը լաւ մը բացուած էր . եւ թռչուն մը՝ աղմուկէն գրգռուած՝ լիակողորդ կը գեղգեղէր . կը թուէր Չուան-Յէի թէ ձայն մը զինք կը հեզնէր , և որչափ

ալ աղմուկը կը շատցընէր՝ անոնցմէ բարձր կը լսէր այս ձայնը :

« Հա՛ հա՛ կ'ըսեւ ան , իմ մ'ը փիլիսոփայ . կեղծ խնդումիդ սակ սիրտդ յուսակնուր կը կարկամի :

« Վանդակիդ մէջ հիաստանջ բոչնիկ մը ունեիր՝ որ կը կարծեւ թէ բոլոր սիեգերեն ան է , եւ եւ ալեխառն մօրուէկդ գեղեցիկ բան չկար իրեն համար :

« Տխմա՛ր , իմա՛ւր , իր քեւերը փորձել ուղեցիր , դուն իրեն ցուցուցիր գարնան բարմութիւնն ու սիրոյ երկինքը . . . :

« Հա՛, հո՛ւ , բու՛ւ , սլացաւ ետքի խրեղութիւն սուող բոչնիկը . հիմա՛յ լա՛ց , ապուօ փիլիսոփայ , լա՛ց դասարկ վանդակիդ մօս » :

— Արդեօք երկնաւորին ոգին է որ կուգայ զիս հեզնելու , գոչեց Չուան-Յէ տարաւալով :

Եւ խեցի մ'առնելով տերեւներուն վրայ նետեց : Թռչնիկը թռաւ երգիծանքի ճիչ մ'արձակելով , ու թերեւ իր հետ տարաւ Իմաստասէրին խելքը՝ քանզի ան չարունակեց պարել եւ երգել՝ անօթներուն զարնելով :

Ժի՛ՏԻ՛Թ 40ԹԻ՛Է

Թարգմ. Թ. Թ.



— Ես , ըսաւ Ռավէլ տխրօրէն , անանկ կին մը ունիմ որուն նմանը քիչ անգամ կը հանդիպի կարգուիլ ուզող պարկեշտ էրիկմարդու մը : Իր հոգին անբիծ է դէմքին պէս , իր միտքը քաղուածքին պէս փափուկ է , և իր ազնուականի շարժումը ձեւերուն չափ ալ հրապոյր ունի : Բայց չգիտեմ ինչո՞ւ վարակուած է նախանձի այն գուեհիկ ախտէն որ յաճախ կուրի տեղի կու տայ մեր երկուքին միջև :

Ճիշդը խօսելով , ես ալ հաւատարիմ ամուսին մը չեմ , բայց իմ տարփունիներս մեր միջավայրէն դուրս եղող կիներէն ընտրած եմ և ասանկով ամէն բան ծածկած : Աւա՛ղ , նախանձին դէմ ճարպիկութիւնը օգուտ չունի , և ժէռմէն , կինս , աւելի աններելի կը նկատէ գաղտնի դըրժում մը քան թէ բաց ճակատով եղած սիրահարութիւն մը : Մնաց որ , նուազ զգուշութեամբ չէ որ կը վարուիմ հետը , թէև քիչեր դիտեմ որոնք հաշիւի դրած ըլլան այն հազարումէկ պզտիկ սուտերը , զորս սէրը կը թելադրէ մեզի , և որոնք կը զանազանեն դիւրազգած սիրտը՝ վայրենի կամ անզգայ էրիկմարդէն :



Մինչև հիմա , կրցայ գաղտնի պահել դուրսի կեանքս և ասիկա եզական բան մ'է ինծի համար :

Անցեալ գարունին մանաւանդ , անանկ մը կարգադրուեցաւ ամէն բան որ կարծեցի թէ աստուած մը կար իմ գործերուս խառնուող : Ան ատեն , խենթի պէս ըրունուած էի մանկամարդ , պաշտելի կնոջ մը , զոր ամէնքդ ալ կը ճանչնաք : — Մարթ տը Մօռէնր — որուն պզտիկ ու փափուկ ձեւքերն ու ոտքերը , Իտալացի իշխանուհիի մը յատուկ իր խուզիչ աչքերը բան մը չեն իր լեզուին քով որ կիթառի մը ձայնին պէս անուշ կը խօսի : — Չափազանց հաւնած էի այդ կնկան , ի՞նչ մեղքս պահեմ , և քանի՞ զինքը կ'երեւակայէի թեւերուս մէջ , այնքան կը կապուէի անոր :

Ինչպէս շատ անգամ կը պատահի , ճիշտ ան ատենն ալ կնոջս համար խանդաղատանք մը ունէի , թէև անոր նախանձը չափ չունէր ինծի դէմ . մինչև իսկ զբպաններս ու թուղթերս կը խուզարկէր հետք մը գտնելու համար :



Օր մը , Մարթ տը Մօռէն փափաքեցաւ ունենալ գեղեցիկ զլւմուիւք մը , զոր գոհարավաճառի մը ցուցապակիին մէջ տեսած էր : Անմիջապէս գնեցի այդ մեծարժէք քարը , բայց միամտութիւնն ունեցայ զայն դրպանս պահելու . կ'ուզէի որ ես ձեռքովս տամ իրեն , անակնկալ մը ըրած ըլլալու համար . հետեւեալ օրը , ինչպէս որոշած էինք , գլուխ գլխի պիտի ճաշէինք դուրսը : Սակայն , երբոր տուն մտայ , վախ մը առաւ զիս , վախ մը որ անտեղի

չէր, որովհետեւ կինս ոտքի վրայ էր եւ կը սպասէր ինծի: Դէմքը ամէն անգամ ունի պէս կռուելու պատրաստ արտայայտութիւնը ունէր, աչքերը կը վառէին և սուր ակունքերովը շրթունքները կը խածնէր: Անմիջապէս դուշակեցի թէ կուրը կատաղի պիտի ըլլար: Ժէռմէն ձեռքը բռներ էր նամակ մը՝ զոր ձանչցայ իսկոյն: Մարթայի դրկած նամակն էր՝ որով որ մը առաջ իմացուցած էր ժամադրավայրը փոխած ըլլալը և նոր հասցէ մը կուտար:

Երբոր այդ պղտիկ տոմսը տեսայ կնոջս ձեռքին մէջ, սոսկումը պատեց գիս: Զանք մը ըրի յիշելու, այդ նամակին ճիշդ պարունակութիւնը, որպէս զի չբռնուիմ ըսելիք սուտին մէջ. բարեբաղդաբար, ամէն բան միտքս ինկաւ կէտ առ կէտ և յիշեցի թէ նամակին մէջ Մարթայի անունը չկար. և պահարանն ալ պատուած նետած էի:

* * *

Ժէռմէն նախ մեղմութեամբ խօսեցաւ ինծի, բայց ձեռքը կը դողդղար:

— Կը ճանչնաս աս նամակը, ըսաւ:

Որովհետեւ գիտէի թէ զայն հագուստին գրպանէն առած էր, գոճ եղայ միայն ուսերս թոթուելով, բայց կինս կաւիճի պէս ձերմկած էր:

— Կը խոստովանի՞ս կոր:

— Ի՞նչ բան. այդ տոմսը կը ճանչնամ, բայց ինծի չի վերաբերիր:

— Ապուշի տե՛ղ կը դնես զիս:

— Ծիշաք կ'ըսեմ կոր, այդ նամակը բարեկամներէս մէկունն է, անուշադրու-

թեամբ գրպանս դրեր եմ . . .

Ոտքի ելաւ և աչքերուս մէջ նայելով . . .

— Այդ բարեկամին անունը:

— Գաղտնիք մ'է, զոր պարտքս է պահել:

— Ուրեմն, գոչեց ձեռքերը զալարելով, ա՛լ ամէն բան վերջացած է մեր մէջ:

Վախցայ. գիտէի որ խօսքին տէրը կին էր, կը զգայի թէ իր առջեւ, ոճրագործի մը դերը կը կատարէի նոյն պահուն. սիրտըս կը սեղմուէր և աշխարհի բոլոր կիներէն գերազանց կը համարէի զինքը:

— Ժէռմէն, գոչեցի . . . ի՞նչ խենթութիւն է ըրածդ . . . կ'երդնում որ . . .

Մէկ քանի քայլ յառաջացաւ դէպ ի դուռը. լսեցի որ կուլար. մեղքցայ զինքը և անհուն սէր մը զգացի իրեն համար: Յանկարճ ետին դարձաւ և շարունակեց.

— Այո՛ . . . ամէն բան վերջացած է. կնիկդ չեմ ալ . . .

Արցունքներն սկսած էին թափիլ իր աղուոր դէմքէն վար.

— Գոնէ կարող ըլլայի հաւտալ քեզի տակաւին . . . բայց ամէն բան մոռցած ես . . . կը մոռնաս կոր . . . մինչև իսկ անցեալ տարի, ճիշտ այս գիշեր միասին անցուցեր էինք և ըսեր էիր թէ յաւիտեան պիտի սիրես զիս . . .

Մէկ վայրկեանի մէջ, յիշեցի տարի մը առաջուան ըրած սիրոյ խոստովանութիւնըս: Ժէռմէն թիկնաթուղի մը մէջ նստած՝ կուլար հիմա դառնօրէն:

— Աւա՛ղ, անցեալ տարի խօսք տուած էիր որ մեր սիրոյ տարեդարձին օրը՝ զիւլիւք քար մը պիտի նուիրես ինծի:

Լուսնից եւ դէմքը ծածկեց ձեռքերովը .
— Չուարթօրէն մօտեցած էի իրեն և կը
թոթովէի .

— Անուշիկ ժէռմէնս , հաւտա՛ ինծի ,
կը սիրեմ քեզ . . . առաջուրնէ աւելի կը
սիրեմ քեզ . . . գէշ բան մը ըրած չեմ
քեզի . . . քու երջանկութեանդ համար . . .

— Չէ՛ , չէ՛ , . . . շատ անտարբեր ես
ինծի համար . . .

— Բայց , եղածը մոռացում մ'է , եւ
չատ չուտով կարելի է դարմանել :

— Դարմանել . . . գոչեց , այս բառովդ
կը հասկցնես արդէն թէ ո՛րքան փոխ-
ուեր ես :

— Ուրեմն , աւելցուցի հեգնօրէն . գո-
հարեղէնի՞ մը համար մոռցած պիտի ըլ-
լամ քեզ . . .

— Այո՛ , զիւմբիւրի մը համար պէտք է
որ բաժնուինք իրարմէ :

— Ուրեմն , չգատուինք . . . քանի որ
ատ է պատճառը մեր բաժնուելուն . . .

Ըսի և գրպանէս հանեցի կարմիր տու-
փը՝ որուն մէջ Մարթայի տրուելիք զիւմ-
բիւրը կը փալիւէր :

— Ա՛ն , ժէռմէն , և հիմա հասկցիր թէ
որքա՛ն գէշ բան է առանց դատողութեան
վճիռ արձակելը :

Թեւերուն մէջ առաւ զիս , ուրախու-
թեան և դարմացումի ճիշ մը արձակելով ,
և իր համբոյրներուն խառնելով սէրը , իր
տարած յաղթանակին հեշտանքը , զոր
ամբողջ սրտովս վայելեցի :

Ժ. — Ն. ՌՕՆԻ



« Ազգային գրադարան



NL0167294

ԴԱԻԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Ա. Վարժուծիւն Մանկանց	8րդ Տիպ	4
2. Բ. » » »	6րդ »	5
3. Գ. » » »	5րդ »	5
4. Տարրական Քերականութիւն	5րդ »	2
5. Լրացուցիչ Դասընթացք	2րդ »	3
6. Փունջ, Աշխարհաբար Հաւարածոյ	4րդ »	3
7. Փնջակ, Պատկերազարդ	5րդ »	1, 10
8. Երկրորդ Փունջ	2րդ »	6
9. Դործն. Ընթացք Շարադրութեան	3րդ »	3
10. Բանալի Շարադրութեան	2րդ »	7
11. Ընտելարան Հայ լեզուի	4րդ »	2
12. Սկզբունք Համաձայնութ. և շարադատութեան		3
13. ALPHABET FRANÇAIS	2րդ Տիպ	2
14. Տար. Ընթացք Կրօնի վ. Քն. Ասլանեանի	3րդ »	2
15. Պատկերազարդ Այբբենարան (նոր ոճով)	4րդ »	0, 20
16. Յայտագիր Դառնեան Գործակալութեան	5րդ »	2
17. Թաղկարաց Հաւարածոյ, Միշին Շրջան	2րդ »	4
18. Դպրոցավարութիւն, գործ Emerson E. White Ի		5
19. Առածապատում Հ. Պէննէեանի		5
20. Համասօս Կրօնագիտութիւն Ա. Հարէլեանի Բ. Տիպ		3
21. Սրտիս ձայնը, բերթուածներ, Բ. Բարսեղեանի		5
22. Նուէր Հայ մանուկներուն, Ս. Դառնեանի		1, 20
23. Դաստիարակութիւն Աղջիկներու, Յուսիկ Վրդ.		3
24. Հրսի, Կիտութիւններու վրայ դասեր, Գ. Անդր.		5
25. Դաստիարակութիւն Պատանիներու, Յուսիկ Վրդ.		3
26. Բիւի՛ԱԿԻ, Լրացիր, 1898ի հաւարածուն, Օսմ. լիբա		2
» » 1899ի » » »		1
» » 1900ի » » »		1/2
27. Աշխարհագրութիւն Օսմ. կայսրութեան Գ. Խաչկունց		3
28. Քերթուածներ, Յակոբճան		5
29. Տղոց Կրօնագիտութիւն, Մկրտիչ Վրդ. Աղանունի		4
30. Թուար. Մեղրական դրութեան		5
31. Առաջնորդ Անգղ. Լեզուի, Յ. Վարժապետեան		5
32. Իվանճէլին, Լօնկֆէլլօ, Տ. Լ. [Թերթօն Բիւրակնի]		5
33. Օսմ. Տաղաչափութիւն Ս. Յ. Կուրտիկեան		5
34. Նոր Դպրոց, 10 Պրակի բաժանորդագին		25
35. Շրջաբերական-Ծանուցագիր ՆՈՐ ԴՊՐՈՑԻ		5
36. Լիակատար Դրացուցակ		5
37. Ծաղկաբաղ Բրիտ. Վարդապետութեան		4
38. Հանդիսարան		6
39. Սրտի Խաղեր		5